

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 33/1

ք.Երևան

15 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով Ա/Ձ Լուայա Թերգյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

ՀՀ հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած անհատական իրավական ակտերի, հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության վերաբերյալ վեճերի լուծման նպատակով հարկային մարմնում գործում է հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե բացակայում է հարկային մարմնի կողմից բողոքարկվող անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության դեպքը:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Լուայա Թերգյանի կողմից բերված դիմում-բողոքում բացակայում է հարկային մարմնի կողմից բողոքարկվող անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության դեպքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Լուայա Թերգյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Դ.ԱՆԱՆՅԱՆ

